ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
✉ 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040, 0322 22648, vanadzor.lori@mta.gov.am

N 01/8645 16 հոկտեմբեր 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դալլաքյան

Ի պատասպան Ձեր 15/10/2025 թվականի N 05/108,4/08689-2025 - 15/10/2025 գրության.

ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանին դիմած Վանաձոր քաղաքի բանակիչ Անի Արամյանի՝ Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամասի տրանսպորտի կանոնակարգման և քաղաքի թափառող շների հարցի լուծման, խնդիրների վերաբերյալ հայտնում եմ, որ Վանաձոր համայնքի Տարոն-2 թաղամասի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող թիվ 16 երթուղին համալրվել է նոր էլեկտարկան ավտոբուսով, բնակիչների տեղաշարժն ավելի արդյունավետ ու հարմարավետ դարձնելու նպատակով 2026 թվականին ևս նախատեսված է տվյալ երթուղին համալրելու նոր ավտոբուսներով:

Տեղեկացնում եմ, որ թափառող շների թվի վերահսկման նպատակով համայնքում իրականացվում է օրենքով սահմանված ստերջացման գործընթաց: Թեպետ այդ մեթոդը անմիջապես չի վերացնում բոլոր խնդիրները, սակայն այն էապես նվազեցնում է շների անվերահսկելի բազմացման տեմպերը և, համապատասխանաբար, շների թվաքանակը:

Ինչ վերաբերում է թափառող շների կացարանների ստեղծման հնարավորությանը՝ այդ հարցը բազմիցս քննարկվել է և շարունակում է քննարկվել որպես կարևոր ուղղություն՝ ապագայում հնարավոր լուծումների շրջանակում:

Հարգանքով՝

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

Կատ. Առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ՝ Արման Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2025 թ.

Անի Արամյանին
հասցե՝ /Լոռու մարզ, ք.Վանաձոր Տարոն 2 թաղամաս ՔՇՀ 4 , 41, 23/2/
/էլ. փոստ ani.aramyan1@edu.ysu.am/
/հեռ 094 99-35-55/

Ի պատասխան Ձեր 14.10.2025թ. առցանց գրության

Հարգելի տիկին Արամյան

Կից Ձեզ եմ ներկայացնում Վանաձոր համայնքի ղեկավարի գրության պատճենը՝ Վանաձոր քաղաքի Տարոն 2 թաղամասի տրանսպորտի կանոնակարգման և քաղաքի թափառող շների հարցի լուծման վերաբերյալ:

Առդիր՝ էլ.նյութ:

X _____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

կատ. Վ.Ղարսայան
հեռ. /0322/ 2-35-99